«ԴԻՄԱԴՐԵԼ, ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ՇՈՒՆՉԸ ԴԻՄԱԴՐԵԼ»,

ասում է Ճարտարեցի մամիկը

Գետաշենում մի Թաքուլ դուրս եկավ մինչեւ ատամները զինված տասնչորս ելուզակի դեմ:

Իսկ Հադրութի տասնչորս գյուղում մի կրակոց չեղավ եւ չզոհվեց մի Թաքուլ, ինչու՞: Ջկայի՞ն անձնուրաց տղաներ, որ պատրաստ լինեին առանց կրակոցի էլ գերել ու դիմադրել: Կային: Ես նրանց տեսել եմ դեռեւս 2 տարի առաջ՝ Կարմրաքար գյուղում, եւ ոչ միայն այնտեղ: Ու՞ր են նրանք այսօր, որ կարող էին իրենց շինարարի մուրճով ու գերանդիներով անգամ դիմակայել: Հարցրեք Առաքյուլ գյուղի կոլտնտեսության վարչության նախագահ Ռազմիկ Գրիգորյանին ու իր շրջախմբին:

Բայց երեւի չպատասխանեն, որովհետեւ ձեռնտու չէ: Երկու տարի առաջ ներկա եղա նրա եւ կողքի գյուղը շենացնող երիտասարդների վեճին: Մեջ մտնելով հարցրի.

- Ընկ. Գրիգորյան, մի՞թե դուք կուզեք, որ տղաները լքեն գյուղը:

- Ու՞ր ուզում են թող գնան, միայն իմ գործերին չխանգարեն,- հստակ ու որոշակի պատասխանեց կոլտնտեսության ղեկավարը, որը Երեւանից ուղարկված հագուստները, որպես օգնություն, տվել էր թուրքերին, որ իր ֆերմայի կովերը կթեն:

Այսօր ֆերման չկա. չկա նաեւ Առաքյուլ գյուղը: Բայց կոլտնտեսության նախագահը կա, գուցեեւ ուրախանում է, որ էժան պրծավ՝ մի տարիուկես արդեն դատարկված կողքի գյուղն էլ մտցնելով նոր կորցրածի ցուցակում:

Ավա՜ղ, միայն նա չէ: Հադրութը մեր մեղքով դատարկվեց: Քանզի աչք փակեցինք շահախնդիր ուժերի դեմ, որոնք բոլոր գյուղերում ու քաղաքներում կան եւ իրենց շահերով ներդաշնակում են կենտրոնի մարդադավ գործունեությանը: Կոլտնտեսությունների ղեկավարներն ինքնապաշտպանական խմբերին ձգտում են խանգարել կարծելով, թե այն դավադրություն է իրենց աթոռների դեմ: Այդ պատճառով է նաեւ, որ գյուղերում միասնական պաշտպանություն չկա եւ գյուղը ակամա աղոցում է այն ճյուղը, որի վրա հենց ինքն է նստած: Նույն բանը տեսա նաեւ Մարտունու շրջանի Ճարտար, Խնուշինակ, Քերթ գյուղերում: Այսօր արդյոք պետք է լռե՞նք այս մասին: Ես կարծում եմ, որ ոչ, որ

Հադրութի բախտին չարժանանանք: Հադրութի, որ տանուլ էր տրված տարիներ առաջ, որտեղ հազարավոր դատարկ տներ կային եւ Ռուսաստանում կամ այլուր բախտ որոնող զավակները ծնողներին կենդանիկենդանի թողել ու թաղել էին ավերակների ու կարտի մեջ՝ նրանց դարձնելով սահմանների միակ պահապաններ սպառազեն խուժանի դեմ:

Այսօր հասարակ ժողովուրդը ղեկավարների հանդեպ ներողամիտ է եւ ամեն կերպ աշխատում է հասկացնել, որ եթե մեկ ազգ ենք, մեկ ճակատագիր ունենք, չարության առաջ միասնական պետք է գործենք, մոռանալով աթոռի վեճերը: Պատահում են նաեւ վաղվա օրվա մասին մոռացող եւ տառապանքից խուսափողներ, ինչպես օրինակ Մարտունու շրջանի էլեկտրատեխնիկ, ազգությամբ հայ Ջալալը, որ ադրբեջանական էկրանի առաջ ի լուր աշխարհի հայտարարեց, թե իր հայ երիտասարդ սերունդն է ամեն ինչի մեղավորը: Արցախի գյուղերի ժողովրդին տեղահանեց խուճապը եւ թշնամու տվյալ պահի նպատակը չընմբռնելը: *«Մեր հայ կանայք, երեխաներին գրկած փախչում էին»*, ասում է մի տարեց հայուհի: *Ես մի փոքր կացին ունեմ, մտցրի խալաթիս թեւի մեջ եւ դուրս եկա: Ասում եմ, ու՞ր եք գնում: Թե՝ անտառ: Անտառում ի՞նչ կա, առաջ անցեք, մի վախեցեք, ես բոլորիդ առաջից եմ գնում, լավ է այստեղ սպանվել, քան թե անտառում սոված մնալ»*: Դիմադրել, մինչեւ վերջին շունչը դիմադրել, անկրկնելի հրամայականով ու սեղմված բանաձեւով ավարտեց տարեց կինը:

Ժողովրդի իմաստությունն է խոսում ճարտարեցի այս կնոջ մեջ:

Արցախ
Մեր սեփ. թղթ.